

Ք. ԵՐԵՎԱՆ, ՂԵԿՏԵՄԲԵՐԻ ՔՍՍՆՎԵՑԻՆ
ԵՐԿՈՒ ԶԱԶԱՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆԻ

26.12.2013թ.

«ՎԱՐՁԱՏՈՒ» «ԳԱՎԱՌԻ ՊՈՒԿԿԻՆԻԿԱ ՊԵՏԱԿԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻ
Իրավաբանական հասցեն քաղաք Գավառ, Շահումյան 14
Ի դեմս տնօրեն՝ ՅՈՎԻՏԱՆՆԵՍ ԶԻՉՈՅԱՆԻ
զրի անունից համաձայն 25.12.2013 թվականի թիվ 03 լիազորագրի հանդես է գալիս՝ ԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳԻ
ԱՐՁԱՔԱՆՑՅԱՆԸ ճնված՝ 16.01.1954թ.

Անձնագիր AN0298119 տրված 040-ի կողմից 14.12.2012թվականին
Հաշվառված՝ քաղաք Գավառ, Լարեկացու փողոց, 36 շենք, 23 բնակարան
Հեռախոս 091725085

Հոր գործում է համաձայն կանոնադրության գրանցման համար 25.140.00556 գրանցված 09.11.1996 թվականին վկայական
01 Ա 029517

«ՎԱՐՁԱՎԱՆ» Հայաստանի Հանրապետությունը ի դեմս « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՋԱՐՑԵՐԻ ԼՆՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՎՈՐԱՎԱՐՁԱԿԱՆ ՀԱՄԱԿԸ , որի անունից հանդես է գալիս
աշխատակազմի ղեկավար ԱՐՏԱԿ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ճնված 30.10.1967թվականին

Անձնագիր AM0389543 տրված 043-ի կողմից 25.07.2011թվականին

Հաշվառված՝ Մարտունի, Ասողածոր 4 փողոց, 16 տուն

Հեռախոս 055996622, 581682

որը գործում է համաձայն կանոնադրության գրանցման համար 226.180.05321 գրանցված 21.04.2004 թվականին վկայական
01 Բ 000932

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՈՄՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր
տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2. կետում նշված գույքի մասը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել հետևյալ գույքը՝ Գեղարքունիքի մարզ, Գավառ
քաղաքի, Շահումյան փողոցի, թիվ 3 (եռեթ) պոլիկլինիկա հասցեում գտնվող անշարժ գույքի մասը՝ 1-ին հարկի
թիվ 25- 20.2 (քսան ամբողջ երկու) քմ, թիվ 26-1.7 (մեկ ամբողջ յոթ) քմ, թիվ 27-1.2 (մեկ ամբողջ երկու) քմ, թիվ
28-8.2 (ութ ամբողջ երկու) քմ, թիվ 29-8.3 (ութ ամբողջ երեք) քմ, թիվ 30-1.6 (մեկ ամբողջ վեց) քմ, թիվ 31-
9.5 (ինը ամբողջ հինգ) քմ սենյակները՝ 50.7 (հիսուսն ամբողջ յոթ) քմ / ըստ պայմանագրին կից նշագծված մասի/
: Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է 1575.0 (հազար հինգ հարյուր յոթանասունհինգ ամբողջ գրո) քմ
սեփականություն հանդիսացող պոլիկլինիկայից , 39.0 (երեսունինը ամբողջ գրո) գծմ սեփականություն
հանդիսացող պարիսպից և գտնվում է՝ 0.2467 (գրո ամբողջ երկու հազար չորս հարյուր վաթսույնյոթ) հա
սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման պոլիկլինիկայի
սպասարկման հողմասի վրա : այսուհետև «ՕԲՅԵԿՏ»-ի մաս):

1.3. «ՕԲՅԵԿՏ»-ի մասը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառ
տարածքային ստորաբաժանման կողմից 01.09.2003թ. տրված սեփականության իրավունքի հ. 1616141
վկայականով:

1.4. Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքի նկատմամբ բռնագրավում կան բռնագանձում
տարածված չէ, այն արգելանքի կալանքի տակ չի գտնվում, գրավադրված չէ և ծանրաբեռնված չէ երրորդ
անձանց իրավունքներով: Սույնով հաստատվում է նաև, որ նշված «ՕԲՅԵԿՏ»-ի մասը վարձակալությամբ չի
հանձնված և օգտագործման իրավունքով տրամադրված չէ, ազատ է երրորդ անձանց պահանջներից և սույն
պայմանագրում չնշված այլ տեսակի իրավական բեռնավորումներից, չի հանդիսանում իրավաբանական անձի
կամ դրա առանձնացված ստորաբաժանման գործունեության վայր կամ իրավաբանական հասցե: Համաձայն
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
աշխատակազմի Գեղարքունիք տարածքային ստորաբաժանման «Գավառ» սպասարկման գրասենյակի
կողմից 27.11.2013 թվականին տրված ՄՏ-27112013-05-0009 միասնական տեղեկանքի, գրանցված
սահմանափակումներ չկա:

2. ԿՈՂԱԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. ՎԱՐՁԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ
- 2.1.1. ՎԱՐՁԱՎԱՆԻ կողմից վարձը վճարելու ժամկետների եական խախտման դեպքում նրանից պահանջել
վաղաժամկետ վճարել վարձավճարը.
- 2.1.2. Պահանջել Վարձակալից օբյեկտի մասն օգտագործել սույն պայմանագրի պայմանների և դրա
նշանակությանը համապատասխան
- 2.1.3. Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտի մասը կամ այն
վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար
- 2.1.4. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե վարձակալն էականորեն վաթարացրել է Օբյեկտի մասի
վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել
վարձավճարը:
- 2.1.5. Ցանկացած ժամանակ լուծել վարձակալության պայմանագիրը՝ երկու ամիս առաջ գրավոր
նախազգուշացնելով վարձակալին:

2.2. ՎԱՐՁԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է

2.2.1. Թերություններ հայտնաբերելիս ՎԱՐՁԱՎԱԼԻ պահանջի դեպքում անհատույց վերացնել «ՕԲՅԵԿՏ»-ի մասի թերությունները կամ իջեցնել վարձավճարը կամ հատուցել թերությունները վերացնելու համար կատարված ծախսերը:

2.2.2. Վարձակալին նախագուշացնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված Օբյեկտի մասի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

2.2.3. վարձակալած տարածքում ապահովել էլեկտրոնների գիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

2.2.4. Ոչ ուշ քան 3 (երեք) ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտի մասն ազատելու անհրաժեշտության մասին:

2.3. ՎԱՐՁԱՎԱԼԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

2.3.1. «ՕԲՅԵԿՏ»-ի մասի օգտագործման ժամանակ ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ

2.3.1.1. ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել անհատույց վերացնելու «ՕԲՅԵԿՏ»-ի մասի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցել «ՕԲՅԵԿՏ»-ի մասի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.2. Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.2 կետին չհամապատասխանող Օբյեկտի մաս, պահանջել հանձնել համապատասխան Օբյեկտի մաս կամ հրաժարվել հանձնված Օբյեկտի մասից, իսկ եթե Օբյեկտի մասի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնել վճարված գումարը:

2.3.3. Օբյեկտի մասը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում:

2.3.4. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել օբյեկտի մասին վերաբերող փաստաթղթերը

2.3.5. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել վարձակալության պայմանագիրը՝ երկու ամիս առաջ գրավոր նախագուշացնելով վարձատուին:

2.4. ՎԱՐՁԱՎԱԼԸ պարտավոր է

2.4.1. ժամանակին վճարել «ՕԲՅԵԿՏ»-ի մասի օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը):

2.4.2. «ՕԲՅԵԿՏ»-ի մասը պահպանել պաշտոնապես վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել «ՕԲՅԵԿՏ»-ի պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

2.4.3. Պայմանագիրը դադարելու դեպքում ՎԱՐՁԱՏՈՒԻՑ վերադարձնել «ՕԲՅԵԿՏ»-ի մասը, կողմերի կողմից կազմված ընդունման-հանձնման ակտով ստացած վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը, 1 (մեկ) օրվա ընթացքում:

2.4.4. «ՕԲՅԵԿՏ»-ի մասն օգտագործել տարածքի նպատակային նշանակությանը համապատասխան:

2.4.5. Ապահովել վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.2 կետում նշված Օբյեկտի մաս՝ դրա զննման և ստուգման համար:

2.4.6. Ապահովել Օբյեկտի մասի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

2.5. «ՕԲՅԵԿՏ»-ի մասը ՎԱՐՁԱՎԱԼԻՆ տրամադրվել է 01.01.2013 թվականից, սույն պայմանագրի պայմաններին և «ՕԲՅԵԿՏ»-ի մասի նշանակությանը համապատասխան վիճակում, երկկողմանի կազմված ընդունման-հանձնման ակտով:

2.6. Վարձակալության հանձնված «ՕԲՅԵԿՏ»-ի մասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Վարձավճարի չափը ամսական կազմում է 28.383 (քսանութ հազար երեք հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ , որը վճարվելու է յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ քան մինչև հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Վարձավճարը ներառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորությունները: 2013 թվականի ամբողջ վարձավճարը վճարվելու է 2014 թվականի 1-ին (առաջին) եռամսյակում:

3.2. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց հետո, եթե նախապես վճարումներ չի կատարվել:

3.3. Ցանկացած ժամանակ կողմերը երկկողմանի համաձայնությամբ կարող են վերանայել վարձավճարը:

3.4. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ պարտավորվում է վճարել իր կողմից օգտագործված բոլոր կոմունալ /էլեկտրոնների գիայի, տաք և սառը ջրի, աղբի, գազի և հեռախոսների/ վարձավճարները:

4. ՊԱՅՄԱՆԱՎՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամանակով:

.. Կապված սույն պայմանագրի առարկայի հետ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագրի կնքելը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած 01.01.2013 թվականից քանի որ վարձակալը սկսած 01.01.2013 թվականից մինչև օրս տարածքի վարձակալությամբ տրվող մասը փաստացի օգտագործել է :

4.3. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից և լուծել այն 2 (երկու) ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

4.4. Սույն պայմանագիրը կնքված է համարվում, սույն պայմանագրից ծագող իրավունքը գրանցելու պահից:

5. ՎԱՐՉԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

5.1. Վարձակալած գույքից ՎԱՐՉԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

5.2. ՎԱՐՉԱԿԱԼԻ կողմից առանց ՎԱՐՉԱՏՈՒԻ համաձայնության կատարված վարձակալած «ՕԲՅԵԿՏ»-ի մասի լուծարման բարելավումների արժեքը չի հատուցվում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՐԱԺԱՄԱԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1. ՎԱՐՉԱՏՈՒԻ և ՎԱՐՉԱԿԱԼԻ պահանջով վարձակալության պայմանագիրը կատարող է վաղաժամկետ լուծվել համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5 % -ի (զրո ամբողջ հինգ) տոկոսի չափով:

7.2. Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի մասի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ պայմանագրի գնի 0.05%-ի (զրո ամբողջ զրո հինգ) տոկոսի չափով:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

7.4. Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի (զրո ամբողջ զրո հինգ) տոկոսի չափով:

7.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6. Տույժերի և /կամ / տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7.7. Սույն պայմանագրի լուծման դեպքում Վարձակալը պարտավոր է 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին վերադարձնել գույքը , ինչպես նաև մարել Վարձատուի հանդեպ ունեցած պարտքերը:

7.8. Սույն պայմանագրի լուծման դեպքում 7.7. կետում նշված ժամկետում գույքը չվերադարձնելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է վարձավճար և տույժ ժամկետն անց յուրաքանչյուր օրվա համար վարձավճարի 1.0 %-ի (մեկ) տոկոսի չափով

7.9. Գույքը Վարձատուին չվերադարձնելու դեպքում և /կամ/ Վարձատուի հանդեպ պարտավորությունը չկատարելու դեպքում , սույն պայմանագրի լուծման մասին ծանուցման պահից Վարձակալին կամ նրա լիազորված անձանց արգելվում է մուտք գործել վարձակալած տարածք , առանց Վարձատուի համաձայնության ինչպես նաև արգելվում է այդ տարածքից որևէ գույքի դուրս բերումը:

8. ԱՆՀԱՂԹԱԴԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

10. ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:

10.2. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով կողմերի ցանկությամբ 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.3. Պայմանագրի բովանդակությունը նոտարի կողմից ընթերցվեց կողմերին և պարզաբանվեց գործող օրենսդրության նորմերը, նոտարը կողմերին պարզաբանեց նրանց իրավունքները և պարտականությունները, գուշացրեց նոտարական գործողության /սույն պայմանագրի կնքման/ հետևանքների մասին:

10.4. Պայմանագրի տեքստը բավարարում է կողմերի պահանջներին:

9

10.5. Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբեության, կամ սպառնալիք, ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

10.6. Կողմերն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում կեղծ փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում միմյանց հասցված նյութական և բարոյական վնասի համար:

10.7. Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 (երեսուն) աշխատանքային օրյա ժամկետում:

Մենք կողմերս, նուտարի ներկայությամբ հաստատում ենք որ գործունակության մեջ սահմանափակված չենք, մեր նկատմամբ չկա սահմանված խնամակալություն, հոգաբարձություն և պատրոճ, չենք գտնվում թունավոր նյութերի, թմրանյութերի, ալկոհոլի ազդեցության տակ, մեր առողջական վիճակով կարող ենք ինքնուրույն իրականացնել և պաշտպանել մեր իրավունքները և կատարել պարտականություններս. չենք տառապում հիվանդություններով, որոնք կարող են խոչընդոտել մեր կողմից կազմվող պայմանագրի էությունը գիտակցելուն և ընկալելուն, ինչպես նաև հաստատում ենք, որ մեզ մոտ բացակայում են սույն պայմանագիրը կազմելուն հարկադրող պարտականություններ, անբողջովին գիտակցում ենք և հասկանում պայմանագրում նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում ենք, որ պայմանագիրը ստորագրում ենք կամավոր և մեզ համար ձեռնտու պայմաններով:

«ՎԱՐՉԱՏՈՒՄ»


«ԳՄՎԱՌԻ ՊՈՆԻԿԼԻՆԻԿԱ ՊԵՏԱԿԱՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
Իրավաբանական հասցեն՝ քաղաք Գավառ, Շահումյան 14
Ի դեմս տնօրենի՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԶՈՅԱՆԻ
լիազորված անձ՝ ԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳԻ ԱՐՁԱՔԱՆՅՅԱՆԸ
ծնված՝ 16.01.1954թ.
Անձնագիր AN0298119 տրված 040-ի կողմից
14.12.2012թվականին
Հաշվառված՝ քաղաք Գավառ, Նարեկացու փողոց, 36 շենք,
23 բնակարան

«ՎԱՐՉԱԿԱԼ»

Հայաստանի Հանրապետությունը ի դեմս « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՅԱՐԿԸ », որի անունից հանդես է գալիս աշխատակազմի ղեկավար ԱՐՏԱԿ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ
ծնված 30.10.1967թվականին
Անձնագիր AM0389543 տրված 043-ի կողմից 25.07.2011թ.
Հաշվառված՝ Մարտունի, Աստղածոր 4 փողոց, 16 տուն

Հասցեի համար և անուն


Լեւոն Զևարթի ԿրպակաՆյան



26.12.2013թ. (երկու հազար տասներեք թվականի դեկտեմբերի քսանվեցին)
Սույն պայմանագիրը վավերացված է իմ «Աջափնյակ» նոտարական տարածքի նոտար՝ ՌՈԶԱ ՀՐԱԶԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՍ կողմից: Կողմերը վարձակալության պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Լիազորված անձի լիազորությունները ստուգված է: Իրավաբանական անձի իրավունակությունը ստուգված է: Անշարժ գույքի նկատմամբ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ իրավունքները ստուգված է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրում:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 24 հ. 6-րդ մասի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման 30 (երեսուն) աշխատանքային օրում:



Գրանցված է սեղանամատյանում _____ 5260 ուլ
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն
ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար *[Signature]*

